

Հավելված

ՀՀ կրթության և գիտության նախարարի  
2009թ. դեկտեմբերի 7-ի N 1059-Ն հրամանի

**ՄԻԶԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 2014 «ՈԱԴԻՌԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ՆՈՐՈԳՈՒՄ (ԸՍՏ ճՅՈՒՂԵՐԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ**

**ԳԼՈՒԽ 1**

ՄԻԶԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 2014 «ՈԱԴԻՌԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ՆՈՐՈԳՈՒՄ (ԸՍՏ ճՅՈՒՂԵՐԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Միջին մասնագիտական կրթության «Մասնագետ» որակավորման աստիճանի 2014 «Ուղիուէկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի)» մասնագիտությունը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշմամբ:
2. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից միջին մասնագիտական կրթության 2014 «Ուղիուէկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի)» մասնագիտության համար մասնագիտական սպասարկումներ սահմանված չէ:
3. Միջին մասնագիտական կրթության 2014 «Ուղիուէկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն ավարտած, պետական անփոփիչ ատեստավորումն անցած շրջանավարտին շնորհվում է «Տեխնիկ» որակավորում:
4. Միջին մասնագիտական կրթության 2014 «Ուղիուէկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականացվել հետևյալ ձևերով՝

- 1) առկա,
- 2) հեռակա,
- 3) հեռավար (դիստանցիոն),
- 4) դրսեկության (էքստեռնատ):

5. Միջին մասնագիտական կրթության 2014 «Ուղիուէկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշմամբ սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.

- 1) կրթության առկա ձևով

- ա. միջնակարգ (լրիվ) կրթության հիմքով 3 տարի  
 բ. հիմնական ընդհանուր կրթության հիմքով 4 տարի
- 2) կրթության հեռակա ձևով  
 ա. միջնակարգ (լրիվ) կրթության հիմքով 4 տարի
- 3) դրսեկության (էքստենտ) և հեռավար (դիստանցիոն) ձևերով ուսուցման տևողությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստենտատով) ուսուցման կարգերը հաստատելու մասին» N 1028-Ն որոշմամբ սահմանված կարգի որոշում է ուսումնական հաստատությունը:
6. Միջին մասնագիտական կրթության 2014 «Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրը միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով յուրացնող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ժամանակը՝ 4140 ժամ է, առավելագույն՝ 6804 ժամ: Հիմնական ընդհանուր կրթության հիմքով հիմնական կրթական ծրագրի յուրացման դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 52 շաբաթով:

## ԳԼՈՒԽ 2

**ՄԻԶԻՆ ՄԱՍՍԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 2014 «ՌԱԴԻՈԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ՆՈՐՈԳՈՒՄ (ԸՍՏ ՃՅՈՒՂԵՐԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱՍՍԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

7. Միջին մասնագիտական կրթության 2014 «Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի)» մասնագիտությամբ մասնագետն իրականացնում է հետևյալ գրաղմունքները՝

1) լուծում է ռադիոէլեկտրոնային տեխնիկայի բնագավառի հետազոտություններին առնչվող տեխնիկական խնդիրներ,

2) վերանորոգում և սպասարկում ռադիոըլունիչներ, հեռուստացույցներ, ձայնագրման, տեսագրման, վերարտադրման և համանման այլ սարքավորումներ:

8. Միջին մասնագիտական կրթության 2014 «Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի)» մասնագիտությամբ մասնագետի՝ գրաղմունքների ոլորտում մասնագիտական պարտականություններն են.

1) ապահովել տեխնիկական օգնություն ռադիոէլեկտրոնային սարքավորումների հետազոտությունների, կատարելագործման և փորձանուշների փորձարկման բնագավառում,

2) մշակել ռադիոէլեկտրոնային սարքավորումների գծագրեր՝ մասնագրերին համապատասխան,

3) որոշել անհրաժեշտ նյութական և աշխատանքային ծախսերը ռադիոէլեկտրոնային սարքավորումներ պատրաստելու և տեղակայելու համար՝ մասնագրերին համապատասխան,

4) վարել ռադիոէլեկտրոնային սարքավորումների աշխատանքի ցուցանիշների և ռեժիմների, տեխնիկական փաստաթղթերի հաշվառում,

5) սարքավորումներն աշխատանքի նախապատրաստել, անսարքությունների հայտնաբերման նպատակով կատարել թեսքային ստուգումներ, կարգաբերել առանձին տարրեր և հանգույցներ,

6) հսկել ռադիոէլեկտրոնային սարքավորումների ճիշտ շահագործմանը, կատարել կանխարգելիչ գննումներ և նորոգում,

7) ապահովել տեխնիկական հսկողություն ռադիոէլեկտրոնային սարքավորումների պատրաստման, կարգաբերման, շահագործման և նորոգման աշխատանքների որակն ապահովելու համար՝ գործող կանոններին և մասնագրերին համապատասխան,

8) կիրառել ռադիոէլեկտրոնային տեխնիկայի բնագավառի գիտելիքները, սկզբունքները և փորձը աշխատանքի ընթացքում ծագող խնդիրները հայտնաբերելու և լուծելու համար,

9) կատարել բովանդակությամբ կից պարտականություններ,

#### ԳԼՈՒԽ 3

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐԱՍՏԵՐ ՄԻԶԻՆ ՄԱՍՍԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 2014 «ՌԱԴԻՈԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ՆՈՐՈԳՈՒՄ (ԸՍՏ ճՅՈՒՂԵՐԻ)» ՄԱՍՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

9. Միջին մասնագիտական կրթության 2014 «Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (Ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտի համար պետք է ապահովի՝

- 1) մասնագիտական գործունեության բնագավառի կարողություններն ու հնտությունները ձեռք բերելու համար պահանջվող ծավալով տեսական ու գործնական գիտելիքների յուրացում,
- 2) աշխատանքային և մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում աշխատանքային կոլեկտիվի անդամների և ղեկավարների հետ հաղորդակցվելու, մասնագիտական և ընդհանուր բնույթի հարցեր ներկայացնելու, դրանք պարզաբանելու կարողության ձևավորում,
- 3) ինչպես տիպական, այնպես էլ որոշակի փոփոխվող գործուներով իրավիճակներում մասնագիտական հարցերի լուծումների տարրերակներ առաջարկելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորում,
- 4) մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը որոշակի սոցիալական և էթիկական հարցերի հետ որպես մեկ ամբողջություն դիտարկելու, ակտիվ քաղաքացիական գիտակցության դրսնորման կարողության ձևավորում,
- 5) մասնագիտական գործունեության գործառնությունները կիրառվող նորմաների սահմաններում իրականացնելու հնտությունների ձևավորում,
- 6) ինքնազարգացման և մասնագիտական կատարելագործման նպատակով իր և աշխատակիցների ուսումնառության կարիքները գնահատելու, դրանք իրագործելու ուղիներն առաջարկելու կարողության ձևավորում,
- 7) մասնագիտական և ընդհանուր բնույթի տեղեկատվության գոյություն ունեցող աղբյուրներից օգտվելու, անհրաժեշտ տեղեկատվությունը ձեռք բերելու կարողության ձևավորում,
- 8) աշխատանքային խմբի գործունեությունը կազմակերպելու, խմբի անդամներին ուղղորդելու, նրանց անհատական հնարավորությունները գնահատելու և արդյունավետ օգտագործելու հնտությունների զարգացում,
- 9) ընթացիկ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ ռազմավարական մոտեցումների տարրեր կիրառելու կարողությունների ձևավորում:

#### ԳԼՈՒԽ 4

ՊԱՐԱՆՁԱՆԵՐ 2014 «ՌԱԴԻՈԷԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ՆՈՐՈԳՈՒՄ (ԸՍՏ ճՅՈՒՂԵՐԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՌՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆԿԱՏՄԱՍՐ

10. Միջին մասնագիտական կրթության 2014 «Ռադիոէկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի)» հիմնական կրթական ծրագիրը ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների բնագավառում շրջանավարտի համար պետք է ապահովի՝

- 1) իմանալ ՀՀ Սահմանադրության, տվյալ բնագավառի աշխատանքները, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթները,
- 2) տիրապետել հայոց լեզվին,
- 3) հաղորդակցվել երկու օտար լեզուներով,
- 4) պատկերացում ունենալ առողջ կենսակերպի մասին, տիրապետել ֆիզիկական կատարելագործման ունակություններին և հմտություններին,
- 5) դրսևորել ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի որոշակի իմացություն,
- 6) պատկերացում ունենալ անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների մասին,
- 7) իմանալ հոգեբանության, միջանձնային փոխհարաբերությունների վարվելակերպի տարրերը,
- 8) իմանալ տնտեսագիտության տեսության հիմնադրույթները, մակրոտնտեսության և միկրոտնտեսության օրենքները, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունները:

11. Միջին մասնագիտական կրթության 2014 «Ռադիոէկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում շրջանավարտի համար պետք է ապահովի՝

- 1) ծանոթ լինել էկոլոգիական հիմնական հասկացություններին, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրներին,
- 2) պատկերացում ունենալ արտակարգ իրավիճակների մասին, տիրապետել արտակարգ իրավիճակներում գործելու սկզբունքներին, ծանոթ լինել փրկարարական աշխատանքների կազմակերպման կառույցներին և փրկարարական տեխնիկային, կարողանալ օգտագործել անհատական պաշտպանության միջոցներ:

12. Միջին մասնագիտական կրթության 2014 «Ռադիոէկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը պետք է ըստ այսուսակ 1-ում բերված մոդուլների ապահովի շրջանավարտի կողմից առանցքային հմտություններին տիրապետում:

13. Միջին մասնագիտական կրթության 2014 «Ռադիոէկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար պետք է ըստ այսուսակ 2-ում բերված մոդուլների ապահովի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների ձեռքբերում:

## ԳԼՈՒԽ 5

ՊԱՐԱՆՁԱԵՐ ՄԻԶԻՆ ՄԱՍՍԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 2014 «ՈՎԱԴԻՈՒԵԿՏՐՈՒԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ՆՈՐՈԳՈՒՄ (ԸՍՏ ճՅՈՒՂԵՐԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆՎԱՏՄԱՐՔ

14. Միջին մասնագիտական կրթության 2014 «ՈՎԱԴԻՈՒԵԿՏՐՈՒԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ և ՆՈՐՈԳՈՒՄ (ԸՍՏ ՃՅՈՒՂԵՐԻ)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 2014 «ՈՎԱԴԻՈՒԵԿՏՐՈՒԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ և ՆՈՐՈԳՈՒՄ (ԸՍՏ ՃՅՈՒՂԵՐԻ)» մասնագիտությամբ մասնագետի պատրաստման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատություններում ուսումնական գործընթացն իրականացնում են մանկավարժական և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատողները:

2) Հաստատության մանկավարժական աշխատողների կազմում ընդգրկվում են դասախոսներ, արտադրական ուսուցման վարպետներ: Դասախոսական անձնակազմի աշխատողները, որպես կանոն, պետք է ունենան իրենց կողմից ուսուցանվող դասընթացի գծով բարձրագույն մասնագիտական կրթություն: Հատուկ մասնագիտական դասընթացները պարագող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

3) Ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը կարող է ունենալ ինչպես բարձրագույն մասնագիտական, այնպես էլ միջին մասնագիտական կրթություն, մասնագիտական աշխատանքի փորձ: Առանձին մասնագիտությունների գծով ուսումնական պրակտիկան կամ նրա որոշակի մասերը կարող է վարել նաև արհեստագործական կրթություն և բավարար մասնագիտական որակավորում ունեցող արհեստավորը:

4) Արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը:

15. Միջին մասնագիտական կրթության 2014 «ՈՎԱԴԻՈՒԵԿՏՐՈՒԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ և ՆՈՐՈԳՈՒՄ (ԸՍՏ ՃՅՈՒՂԵՐԻ)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության ուսումնամեթոդական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 2014 «ՈՎԱԴԻՈՒԵԿՏՐՈՒԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ և ՆՈՐՈԳՈՒՄ (ԸՍՏ ՃՅՈՒՂԵՐԻ)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահոված լինի ուսանողի համար մատչելի տեղեկատվական նյութերով (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա), ինչն, ըստ բովանդակության պետք է համապատասխանի մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների լրիվ ցանկին: Այդ առարկաների և մոդուլների, ինչպես նաև ուսումնական գործընթացի կազմակերպման բոլոր ձևերի գծով (տեսական, գործնական պարագաներների, ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների, կուրսային և դիպլոմային աշխատանքների) պետք է առկա լինեն դասագրքեր, ուսումնամեթոդական, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցեր, գործնական խաղերի սցենարներ, թեստային հանձնարարականների հավաքածուներ, ալգորիթմներ, մեթոդական մշակումներ, ցուցումներ, երաշխավորություններ, տեղեկատվական գրականություն, դիտողական նյութեր, ուսուցման տեխնիկական միջոցներ, ինչպես նաև միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման նյութեր:

16. Միջին մասնագիտական կրթության 2014 «Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող կազմակերպության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Ուսումնական կարինետների երաշխավորվող ցանկը՝

- ա. հայոց լեզվի և մշակույթի հիմունքների,
- բ. օտար լեզուների,
- գ. լինգաֆոնային,
- դ. ընդհանուր հումանիտար առարկաների,
- ե. անվտանգության և առաջին օգնության,
- զ. համակարգչային,
- է. ճարտարագիտական գրաֆիկայի,
- ը. ռադիոէլեկտրոնային տարրային բազայի:

2) Ուսումնական լաբորատորիաների երաշխավորվող ցանկը՝

- ա. էլեկտրատեխնիկայի,
- բ. էլեկտրոնային և միկրոկոնտրոլերային սարքերի,
- գ. ռադիոէլեկտրաչափիչ տեխնիկայի,
- դ. էլեկտրոնիկայի և սիստեմատեխնիկայի:

3) Ուսումնական արհեստանոցներ

- ա. փականագործական,
- բ. ռադիոէլեկտրամոնտաժի,
- գ. ռադիոէլեկտրոնային տեխնիկայի վերանորոգման:

4) Սպորտային համալիր՝

- ա. մարզադահլիճ,
- բ. մարզահրապարակ:

Կրթական ծրագիր իրականացնող կազմակերպությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կարինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ:

17. Միջին մասնագիտական կրթության 2014 «Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չափելով է գերանգանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները:

2) Ուսումնառության ընթացքում ուսանողի բեռնվածությունը պարտադիր լսարանային պարապմունքներով չափելով է գերանգանցի շաբաթական 36 ժամը, ինչը նաև ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալն է, ընդ որում՝ նշված ծավալը չի ներառում նախասիրական առարկաների պարապմունքները, խորհրդատվությունները և լրացուցիչ արտալսարանային պարապմունքները:

3) Ուսումնական խմբի համար սահմանվում են խորհրդատվության ժամեր յուրաքանչյուր ուսումնական տարում մինչև 100 ժամ:

4) Ուսումնական տարվա սկիզբը և ավարտը բոլոր կուրսերում որոշվում է ուսումնական պլաններով:

5) Նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (ոչ ավել, քան շաբաթական 4 ժամ առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

6) Հեռակա ձևով ուսուցման դեպքում ուսումնական տարվա ընթացքում դասախոսների հետ ուսանողների պարապմունքների ծավալը պետք է կազմի ոչ պակաս, քան 160 ժամ:

18. Միջին մասնագիտական կրթության 2014 «Ուսուցիչեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 2014 «Ուսուցիչեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի որոշակի մասի ուսուցումն իրականացվում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախապարտական պրակտիկաների ձևով: Պրակտիկաների ընթացքում ուսանողները կատարելագործում են իրենց գործնական հնտությունները:

2) Պրակտիկայի տևողությունը սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով:

3) Պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում են ուսումնական հաստատությունները:

4) Պրակտիկաների անցկացումը վարում են արտադրական ուսուցման վարպետները, դասախոսները:

5) Ուսումնական պրակտիկաներն անց են կացվում պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում ու տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական, ուսումնաարտադրական արհեստանոցներում, ուսումնական տնտեսություններում, ուսումնափորձնական տեղամասերում, ուսումնական հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև արտադրական կազմակերպություններում, հաստատություններում:

6) Արտադրական և նախապարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում: Այդ նպատակի համար ուսումնական հաստատությունը պետք է նախապես կնքի պայմանագրեր համապատասխան արտադրական հիմնարկների հետ պրակտիկայի տեղերի և անցկացման պայմանների վերաբերյալ:

19. Միջին մասնագիտական կրթության 2014 «Ուսուցիչեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրին իրականացնելու ընթացքում ուսանողների միջանկյալ և ամփոփիչ ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 2014 «Ուսուցիչեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսուցման ընթացքը վերահսկելու և արդյունքների ձեռքբերումը գնահատելու նպատակով անց է կացվում ուսանողների միջանկյալ ատեստավորում, իսկ որակավորում շնորհելու համար՝ շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորում:

2) Միջանկյալ ատեստավորում կարող է անցկացվել ինչպես ուսումնական կիսամյակի ընթացքում այնպես էլ վերջում:

3) Ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ներառվող նյութի ծավալի և ժամկետների մասին:

4) Միջանկյալ ատեստավորման համար ընտրված ուսումնական նյութը չի կարող ավելին լինել երկու անընդմեջ կիսամյակների նյութից:

5) Շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ծևով:

6) Պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա համոզվել սույն չափորոշչով՝ 2014 «Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի)» մասնագիտությամբ մասնագետի համար սահմանված պահանջներին շրջանավարտի համապատասխանության մեջ:

#### ԳԼՈՒԽ 6.

ՄԻՋԻՆ ՍԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 2014 «ՌԱԴԻՈԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ՆՈՐՈԳՈՒՄ (ԸՍՏ ՃՅՈՒՂԵՐԻ)» ՍԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՐՉԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

20. Միջին մասնագիտական կրթության 2014 «Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացվում է համաձայն առյուսակ 3-ում բերված օրինակելի ուսումնական պլանի:

21. Միջին մասնագիտական կրթության 2014 «Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնող կազմակերպությունը օրինակելի ուսումնական պլանը կիրառելիս՝

1) սույն չափորոշչով սահմանված օրինակելի ուսումնական պլանի հիման վրա կազմում և հաստատում է աշխատանքային ուսումնական պլանը,

2) աշխատանքային ուսումնական պլանը կազմելիս կարող է մինչև 5% չափով փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը,

3) կարող է փոփոխել առանձին առարկաների և մոդուլների ծրագրային նյութի բովանդակությունը 15%-ի սահմաններում՝ չփոփոխելով արդյունքները և կատարման չափանիշները,

4) առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշում է տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,

5) պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշում է ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,

6) մասնագիտական առարկաների և մոդուլների ուսումնական ծրագրերը կազմելիս հաշվի է առնում գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,

7) ընտրում է շրջանավարտների՝ սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերից մեկը:

Միջին մասնագիտական կրթության 2014 - «Ռադիոէլեկտրոնային տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլներ

| <b>ՄՈՂՈՒՄ ԱՎԱՍՈՒՄԸ «ՐԱԴԻՈՂԱԿՑՈՒԹՅՈՒՆ»</b> |  |
|---|--|
| <b>Մողումի դասիչը</b>                     | <b>ԱՀՀ- 4-09-001</b>   |
| <b>Մողումի նպատակը</b>                    | Մասնագիտական ուսումնառությանը զուգնթաց կամ առանձին ուսանողներին տալ գիտելիքներ հաղորդակցության ունակությունների զարգացման վերաբերյալ: Ավարտելով այս մոդուլն ուսանողը ձեռք կբերի հաղորդակցության համար էական նշանակություն ունեցող ունակություններ և ինքնավատահություն, կլինի ակտիվ, արդյունավետ մասնագիտական գործունեության մեջ և անձնական կյանքում: |
| <b>Մողումի տևողությունը</b>               | 54 ժամ   |
| <b>Մուտքային պահանջները</b>               | Նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:   |
| <b>Մողումի գնահատման կարգը</b>            | Մողումի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի պահովումն է  |
| <b>ՈՒսումնառության արդյունք 1</b>         | Սահմանում է ուսումնառության անձնական նպատակները  |
| <b>Կատարման չափանիշներ</b>                | ա. ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները,<br>բ. ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները,<br>գ. ճիշտ է սահմանում ուսումնառության տարրեր եղանակները:  |
| <b>ՈՒսումնառության արդյունք 2</b>         | Կարողանում է ներկայացնել բանավոր և գրավոր տեղեկատվություն պարզ թեմաների և տեքստերի մասին   |
| <b>Կատարման չափանիշներ</b>                | ա. օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածքը,<br>բ. ներկայացված հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ,<br>գ. նպատակային է կատարում տեղեկատվության առանձնացումը, խմբավորումը,<br>դ. հաղորդումը ներկայացնում և իրականացնում է՝ հաշվի առնելով իրավիճակը և լսարանը:                                |
| <b>ՈՒսումնառության արդյունք 3</b>         | Կարողանում է նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ   |
| <b>Կատարման չափանիշներ</b>                | ա. ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները՝ պարզաբանումներ ստանալու ծգտումը, գրառումներ կատարելը, ամփոփելը,<br>բ. ազատ ձևակերպում, արտահայտում, պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները,<br>գ. ցուցաբերում է հստակ համոզելու ունակություն,<br>դ. կատարում է ճիշտ ամփոփում, եզրափակում:                  |
| <b>ՈՒսումնառության արդյունք 4</b>         | Կարողանում է մեկնաբանել սխեմաներ, այլուսակներ, դիագրամներ և այլ նյութեր  |
| <b>Կատարման չափանիշներ</b>                | ա. ճիշտ է նախանշում սխեմաների, այլուսակների, դիագրամների և այլ նյութերի նշանակությունը, դրանց միջև եղանակառնաման համար օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք:<br>բ. մեկնաբանման համար օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք:   |
| <b>ՈՒսումնառության արդյունք 5</b>         | Կատարում է փաստաթղթավորում   |
| <b>Կատարման չափանիշներ</b>                | ա. ըստ նշանակություն ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերը՝ դիմում, ինքնակենսագրություն, պաշտոնական և ոչ պաշտոնական նամակներ, արձանագրություն, երաշխավորագիր և այլն,<br>բ. ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղը և դերը,<br>գ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը:                                      |

|  |  |
|--|--|
| <b>ՈՒԽՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 6</b>                                  | Կարողանում է ղեկավարել այլ աշխատողների<br>Կատարման չափանիշներ  |
|  | ա. գիտի աշխատողների հետ վարվեցողության կանոնները,<br>բ. ճիշտ է առաջադրում խնդիրների շրջանակը և բաշխում աշխատողների միջև,<br>գ. ճիշտ է կիրառում աղմինհստրատիվ խրախուսման եղանակները և պատժամիջոցները,<br>դ. կարողանում է լսել և հաշվի առնել զրուցակցի կարծիքը:  |
| <b>ՍՊՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՅՆԵՐ»</b> |  |
| <b>Մոդուլի դասիչը</b>  | S3S-4-09-001   |
| <b>Մոդուլի նպատակը</b>   | Տրվում են տարրական գիտելիքներ MICROSOFT WORD տեքստային խմբագրի նաև ուսանողի մոտ զարգացվում տեքստային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, ինչպես նաև փաստաթղթերի պահպանման, տպագրման և ինտերնետ ցանցում աշխատելու տարրական հմտություններ:  |
| <b>Մոդուլի տևողությունը</b>  | 108 ժամ  |
| <b>Սուտրային պահանջները</b>  | Նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:   |
| <b>Մոդուլի գնահատման կարգը</b>                                     | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար նակարդակի ապահովումն է:   |
| <b>ՈՒԽՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 1</b>                                  | WORD ԾՐԱԳԻՐ (Նիմնական տեղեկություններ)   |
| <b>Կատարման չափանիշներ</b>   | ա. իմանալ Microsoft Word ծրագրի պատուհանի կառուցվածքը,<br>բ. բացել նոր փաստաթուղթ,<br>գ. նուտքագրել ստեղնաշարի օգնությամբ,<br>դ. տեղաշարժել տեքստային ցուցիչը տեքստի մեջ,<br>ե. կատարել տարրական ուղղումներ տեքստում,<br>գ. փակել փաստաթուղթը,<br>ե. բացել առկա փաստաթուղթը,<br>ո. ինանալ Zoom գործիքի հնարավորությունները:  |
| <b>ՈՒԽՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 2</b>                                  | Տեքստերի տարրական ֆորմատավորում  |
| <b>Կատարման չափանիշներ</b>   | ա. պատրաստել Word ծրագիրը հայերեն և ռուսերեն տեքստ մուտքագրելու համար,<br>բ. նշել բառերը և տեքստային հատվածները,<br>գ. կատարել մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում,<br>դ. կատարել տողերի հավասարեցում,<br>ե. փոխել միջտողային տարածությունները,<br>գ. փոխել տեքստի գույնը Font Color գործիքով,<br>ե. փոխել տեքստի գունային ֆոնը Highlight գործիքով,<br>օ. փոխել պարբերության խորությունները լուսանցքներից,<br>թ. իմանալ Undo գործիքի նշանակությունը, չեղյալ հայտարարել (հրաժարվել) ֆորմատավորման կատարված գործողությունները,<br>Ժ. իմանալ Redo գործիքի նշանակությունը, վերականգնել ֆորմատավորման չեղյալ հայտարարված գործողությունները,<br>ի. կրկնել ֆորմատավորման վերջին գործողությունը,<br>լ. փոխել լուսանցքների խորությունները, ընտրել էջի ուղաձիգ (Portrait) կամ հորիզոնական (Landscape) դիրքերը, ընտրել թղթի չափսերը,<br>ի. պատճենել տեքստը,<br>Ժ. տեղափոխել տեքստը, |

|                            |  |
|----------------------------|--|
|                            | կ. տողադարձել տեքստը,<br>հ. համարակալել էջերը:   |
| Ուսումնառության արդյունք 3 | Փաստաթղթի պահպանում  |
| Կատարման չափանիշներ        | ա. իմանալ փաստաթղթերի պահպանման իմաստը,<br>բ. պահպանել նոր ստեղծված փաստաթուղթը,<br>գ. իմանալ փաստաթղթի ընթացիկ պահպանման նշանակությունը, պահպանել փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները:  |
| Ուսումնառության արդյունք 4 | Այլուսակների պատրաստում և խմբագրում  |
| Կատարման չափանիշներ        | ա. պատրաստել այլուսակ,<br>բ. այլուսակի մեջ մուտքագրել տեքստ,<br>գ. կատարել ուղղումներ ու լրացումներ այլուսակում,<br>դ. ավելացնել նոր տողեր և նոր սյուներ այլուսակում,<br>ե. ջնջել այլուսակի տողերը և սյուները,<br>զ. փոխել սյունակի լայնությունը,<br>է. փոխել տողի բարձրությունը,<br>ը. փոխել այլուսակի գծերի գույնը,<br>թ. գրւավորել այլուսակի տողը և սյունը:   |
| Ուսումնառության արդյունք 5 | Գրաֆիկական խմբագրում և նկարագրում  |
| Կատարման չափանիշներ        | ա. գծագրել գրաֆիկական օբյեկտներ Draw, Line, Arrow, Rectangle, Oval գործիքներով,<br>բ. գծագրել գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով AutoShapes պատուհանի պատրաստի ձևերը,<br>գ. գծագրել կանոնավոր պատկերներ՝ օգտագործելով SHIFT ստեղնը,<br>դ. ֆորմատավորել գրաֆիկական օբյեկտները,<br>ե. խմբավորել գրաֆիկական օբյեկտները,<br>զ. հավասարեցնել գրաֆիկական օբյեկտները միմյանց նկատմամբ,<br>է. գծագրել տեքստային բլոկներ,<br>ը. գրւավորել գրաֆիկական օբյեկտները Fill Color գործիքով,<br>թ. երանգավորել գրաֆիկական օբյեկտները Fill Color գործիքի Fill Effect.s... հրամանով,<br>ժ. ստվերավորել գրաֆիկական օբյեկտները Shadow Style գործիքով: |
| Ուսումնառության արդյունք 6 | Փաստաթղթի տպագրում   |
| Կատարման չափանիշներ        | ա. իմանալ նախադիտման (Print Preview) ռեժիմի նշանակությունը,<br>բ. նախադիտման ռեժիմում թերթել փաստաթուղթը,<br>գ. իմանալ Print պատուհանի ֆունկցիաները,<br>դ. տպագրել փաստաթուղթը:  |
| Ուսումնառության արդյունք 7 | Ինտերնետում աշխատելու իմացություն  |
| Կատարման չափանիշներ        | ա. իմանալ ինտերնետ հասկացության նշանակությունը,<br>բ. ճանաչել Internet Explorer ծրագիրը, իմանալ դրա նշանակությունը,<br>գ. իմանալ ինտերնետային հասցե հասկացությունը,<br>դ. իմանալ History հրամանի նշանակությունը,<br>ե. իմանալ Favorites հրամանի նշանակությունը,<br>զ. իմանալ Stop հրամանի նշանակությունը,  |

|   |   |
|---|---|
|   | <p>Է. իմանալ Refresh հրամանի նշանակությունը,</p> <p>Ծ. իմանալ Back և Forward կոճակների նշանակությունը,</p> <p>Թ. պատճեննել տեքստային ինֆորմացիան ինտերնետային էջից,</p> <p>Ժ. պատճեննել գրաֆիկական ինֆորմացիան ինտերնետային էջից,</p> <p>Ի. իմանալ ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայությունները,</p> <p>Լ. ըստ չափանիշների որոնել տեղեկատվություն՝ օգտագործելով չափանիշների կոնկրետացումը { “ ” } սիմվոլներով, միավորումը { + } սիմվոլով և բացառումը { - } սիմվոլով,</p> <p>Խ. ճիշտ օգտվելով տեղեկատվության որոնման ինտերնետային ծառայություններից, գտնել համարժեք ռադիոտարրերի փոխարինման, հանապատասխան հեռուստատեսային սարքավորումների համարման տեղեկատվությունը,</p> <p>Ծ. իմանալ էլեկտրոնային փոստի նշանակությունը,</p> <p>Կ. ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակներ,</p> <p>Հ. էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկել և ստանալ ֆայլեր:</p> |
| <b>ՍՈՂՈՒՄԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎԱՆՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՏՈՒԹՅՈՒՆ»</b> |   |
| <b>Սողումի դասիք</b>  | ԱՅՕ-4-09-001  |
| <b>Սողումի նպատակը</b>  | Մոդուլը մշակվել է ռադիոէլեկտրոնային տեխնիկայի վերանորոգման և սպասարկման ոլորտում աշխատանքի անվտանգության վերաբերյալ ուսանողներին գիտելիքներ, աշխատանքի պաշտպանության միջոցառումների հյականացման և առաջին օգնության կազմակերպման հմտություններ տալու համար:  |
| <b>Սողումի տևողությունը</b>                                   | 54 ժամ  |
| <b>Մուտքային պահանջները</b>                                   | Նախնական գիտելիքներ չեն պահանջվում:   |
| <b>Մոդուլի գնահատման կարգը</b>                                | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:  |
| <b>ՈՒսումնառության արդյունք 1</b>                             | Սահմանում է աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները  |
| <b>Կատարման չափանիշներ</b>                                    | <p>ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը, օրենքները և աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմնատիվային փաստաթղթերը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը, նեխանիզմները և դրանց խախտման հետ կապված պատասխանատվությունը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում տարբեր մակարդակների դեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ և դժբախտ դեպքերի ու պատահարների փաստաթղթավորման կարգը:</p>   |
| <b>ՈՒսումնառության արդյունք 2</b>                             | Պահպանում է անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները ռադիոէլեկտրոնային սարքավորումների սպասարկման և նորոգման աշխատանքներն իրականացնելիս  |
| <b>Կատարման չափանիշներ</b>                                    | <p>ա. ճիշտ է սահմանում և կիրառում էլեկտրոնային սարքավորումների շահագործման և վերանորոգման անվտանգության տեխնիկայի հիմնական պահպանները,</p> <p>բ. ճիշտ է սահմանում և պահպանում էլեկտրանավտանգության կանոնները,</p> <p>գ. ճիշտ է սահմանում և պահպանում հրեթիաանավտանգության կանոնները:</p>  |
| <b>ՈՒսումնառության արդյունք 3</b>                             | Գիտի ռադիոէլեկտրոնային սարքավորումների վերանորոգման և սպասարկման աշխատանքների ժամանակ կանխատեսվող հնարավոր վնասվածքների տեսակները, դրանց պատճառները և պաշտպանվելու միջոցները  |
| <b>Կատարման չափանիշներ</b>                                    | <p>ճիշտ է ներկայացնում ռադիոէլեկտրոնային սարքավորումների վերանորոգման և սպասարկման աշխատանքների ժամանակ կանխատեսվող հնարավոր վնասվածքները դրանց պատճառները և պաշտպանվելու միջոցները.</p> <p>ա. վնասվածքներ էլեկտրական հոսանքից,</p>   |

|   |   |
|---|---|
|   | <p>բ. այրվածքներ գողման աշխատանքների ժամանակ,</p> <p>գ. օրգանիզմի թունավորում,</p> <p>դ. օրգանիզմի ճառագյրահարում գերարձրիաճախային ազդանշաններով,</p> <p>ե. հնարավոր տարրեր այլ վնասվածքներ:</p>  |
| ՈՒԽՈՒՆԱՉՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 4                                       | Կազմակերպում է առաջին օգնությունը և կիրառում անհրաժեշտ միջոցներ   |
| Կատարման չափանիշներ   | <p>ա. Ծիշտ է կատարում առաջին օգնության կազմակերպումը, կիրառելով անհրաժեշտ միջոցներ,</p> <p>բ. արեհեստական շնչառություն և սրտի աշխատանքի վերականգնում էլեկտրահարման դեպքում,</p> <p>գ. արյան հոսքի դադարեցում և վիրակապում բաց վնասվածքների դեպքում,</p> <p>դ. այրվածքների մշակում,</p> <p>ե. թունավորման ժամանակ օրգանիզմի հնարավոր մաքում:</p>   |
| <b>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԵՅՈՒՂԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵՆԵԶՄԵՆԹ»</b> |   |
| Մողուլի դասիչը  | ՇՏՄ-4-09-001  |
| Մողուլի նպատակը   | Ուսանողին տայ գիտելիքներ հիմնական և շրջանառու միջոցների, արտադրանքի հնքնարժեքի, գնի, շահույթի, շահութաբերության, հարկային հանակարգի և մենեջմենթի վերաբերյալ: Ավարտելով այս մոդուլն ուսանողը ձեռք կրելի գիտելիքներ տնտեսության հիմնական խնդիրների և մենեջմենտի վերաբերյալ:   |
| Մողուլի տևողությունը  | 72 ժամ  |
| Մուտքային պահանջները  | Այս մոդուլն ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԸՀՍՏ-4-009-002 «Տնտեսագիտության հիմունքներ» մոդուլը:  |
| Մողուլի գնահատման կարգը   | Մողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:  |
| ՈՒԽՈՒՆԱՉՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 1                                       | Գիտի հիմնական և շրջանառու միջոցները   |
| Կատարման չափանիշներ   | <p>ա. Ծիշտ կատարում կազմակերպության հիմնական միջոցների մաշվածության հաշվարկը, վերագնահատումը,</p> <p>բ. գիտի կազմակերպության շրջանառու միջոցները, դրանց շրջապատճենի փուլերը,</p> <p>գ. Ծիշտ է կատարում շրջանառու միջոցների նորմատիվային հաշվարկը՝ ըստ առաջարիանքի,</p> <p>դ. գիտի շրջանառու միջոցների արդյունավետության ցուցանիշները:</p>   |
| ՈՒԽՈՒՆԱՉՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 2                                       | Կարողանում է հաշվարկել ապրանքի հնքնարժեքը, ձևավորել շուկայական գինը   |
| Կատարման չափանիշներ   | <p>ա. գիտի արտադրանքի հնքնարժեքը, տարրերակում է հնքնարժեքի տեսակները,</p> <p>բ. Ծիշտ է դասակարգում արտադրության ծախսերը,</p> <p>գ. Ծիշտ է տարրերակում գների տեսակները,</p> <p>դ. գիտի պահանջարկի և առաջարկի օրենքները, գաղափար ունի շուկայական գնի մասին:</p>   |
| ՈՒԽՈՒՆԱՉՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 3                                       | Տիրապետում է վարձատրության ձևերի, շահույթի, շահութաբերության ցուցանիշների և հարկերի վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքների  |
| Կատարման չափանիշներ   | <p>ա. գիտի աշխատավարձի տեսակները, աշխատավարձի կազմակերպման տարիֆային համակարգը,</p> <p>բ. Ծիշտ է գնահատում աշխատավարձի ֆոնդը, գիտի դրա հաշվման մեթոդները,</p> <p>գ. Ծիշտ է հաշվարկում շահույթը, գնահատում ազդող գործոնները,</p> <p>դ. Ծիշտ է գնահատում է շահութաբերության ցուցանիշները,</p> <p>ե. գիտի հարկերի անհրաժեշտության, նորմատիվային արժեքների և պետության մեջ դրանց կարևոր դերի մասին:</p> |
| ՈՒԽՈՒՆԱՉՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 4                                       | Գիտի կազմակերպության կառուցվածքը, արտադրության կազմակերպման հիմնական ձևերը  |
| Կատարման չափանիշներ   | <p>ա. գիտի կազմակերպության կառուցվածքը,</p> <p>բ. գիտի արտադրության կազմակերպման հիմնական սկզբունքները,</p>   |

|   |   |
|---|---|
|   | գ. գիտի գործիքային տնտեսության և վերանորոգման աշխատանքների կազմակերպումը:   |
| <b>ՈՒԽՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 5<br/>Կատարման չափամիջներ</b> | <p>Տիրապետում է մենեջմենթի էռլյանը և գործնթացին</p> <p>ա. գիտի ռադիոէկուրոնային տեխնիկայի բնագավառում կառավարման գործընթացի պլանավորման, կազմակերպման գործառույթները,</p> <p>բ. տարրերակում է ոլորտի կազմակերպության ներքին և արտաքին միջավայրերը, դրանց վրա ազդող գործոնները,</p> <p>գ. գիտի օգտագործել պլանավորման և կառավարման մեթոդները մենեջմենթում,</p> <p>դ. ճիշտ է կիրառում անձնակազմի շահադրդման և վերահսկման մեթոդները:</p> |

## Այլուսակ 2

Միջին մասնագիտական կրթության 2014 - «Ռադիոէկուրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ

| ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԲԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՖԻԿԱ»  |   |
|---|---|
| <b>Մոդուլի դասիք</b>  | ՌԷՍ-4-09-001  |
| <b>Մոդուլի նպատակը</b>  | Ուսանողներին տալ մասնագիտական աշխատանքային կիրառական գիտելիքներ և անհրաժեշտ հմտություններ գծագրեր կարդալու, հասկանալու, պարզագույն գծագրեր կատարելու համար:   |
| <b>Մոդուլի տևողությունը</b>   | 72 ժամ  |
| <b>Մուտքային պահանջները</b>   | Նախնական գիտելիքներ չեն պահանջվում:   |
| <b>Մոդուլի գնահատման կարգը</b>  | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափամիջների բավարար նակարդակի ապահովումն է:  |
| <b>ՈՒԽՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 1<br/>Կարդում է աշխատանքային գծագրեր, տիրապետում գծագրերի կատարման և ձևակերպման ստանդարտներին</b> |   |
| <b>Կատարման չափամիջներ</b>  | <p>ա. ճամաչում և ճիշտ է կարդում ռադիոէկուրոնային տարրերի և սարքավորումների պայմանական նշանակումները՝ ըստ գործող ստանդարտների,</p> <p>բ. գիտի մասշտաբավորման կանոնները և ճիշտ է կիրառում շտամպները,</p> <p>գ. ռադիոէկուրոնային տարրերի և սարքավորումների պայմանական նշանակումները ճիշտ է պատկերում,</p> <p>դ. ճիշտ է կարդում ռադիոէկուրոնային սարքավորումների կառուցավորման սխեմաները,</p> <p>ե. ճիշտ է կարդում ռադիոէկուրոնային սարքավորումների էլեկտրական սխեմաները,</p> <p>զ. ճիշտ է կարդում ռադիոէկուրոնային սարքավորումների բնութագրերը և էլեկտրական պարամետրերը:</p> |
| <b>ՈՒԽՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 2<br/>Կատարման չափամիջներ</b>   | Կատարում է էսքիզներ   |
|   | <p>ա. ճիշտ է կատարում ռադիոէկուրոնային տարրերի էսքիզները,</p> <p>բ. ճիշտ է կատարում հանգույցների և դետալների աշխատանքային գծագրերը,</p> <p>զ. կարողանում է ճիշտ ներկայացնել ռադիոէկուրոնային սարքավորման էսքիզային գծագրը:</p>  |
| <b>ՈՒԽՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 3<br/>Կատարման չափամիջներ</b>   | Գծում է էլեկտրական սկզբունքային, ֆունկցիոնալ և մոնտաժային սխեմաներ  |
| <b>Մոդուլի նպատակը</b>  | Ուսանողին տալ գիտելիքներ էլեկտրատեխնիկայի հիմնական հասկացությունների, հաստատում և փոփոխական   |

## ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԷԼԵԿՏՐԱՍՏԵԽՆԻԿԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

|                        |   |
|------------------------|---|
| <b>Մոդուլի դասիք</b>   | ՌԷՍ-4-09-002  |
| <b>Մոդուլի նպատակը</b> | Ուսանողին տալ գիտելիքներ էլեկտրատեխնիկայի հիմնական հասկացությունների, հաստատում և փոփոխական |

|                                   |  |
|-----------------------------------|--|
|                                   | հոսանքի էլեկտրական շղթաների, դրանցում ընթացող էլեկտրանագնիսական երևոյթների հաշվարկի, էլեկտրական շղթայի առանձին տեղամասերում էլեկտրական մեծությունների չափման վերաբերյալ: Ավարտելով մոդուլն ուսանողը ծերք կրերի գործնական գիտելիքներ և հմտություններ էլեկտրական շղթաների հաշվարկի և առանձին էլեկտրական մեծությունների չափման տեխնիկայի վերաբերյալ:  |
| <b>Մոդուլի տևողությունը</b>       | 108 ժամ  |
| <b>Մուտքային պահանջները</b>       | Այս մոդուլն ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԱԱՕ-4-09-001 «Անվտանգություն և առաջին օգնություն» մոդուլը:   |
| <b>Մոդուլի գնահատման կարգը</b>    | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար նաև կարդակի ապահովումն է:   |
| <b>Ուսումնառության արդյունք 1</b> | Տարրերակում է հաստատուն հոսանքի էլեկտրական շղթայի տարրերը, հաշվարկում շղթայի պարամետրերը և կատարում էլեկտրական չափումներ   |
| <b>Կատարման չափանիշներ</b>        | ա. տարրերակում է հաստատուն հոսանքի էլեկտրական շղթայի տարրերի միացման տեսակները և կատարում էլեկտրական մեծությունների հաշվարկներ,<br>բ. ճիշտ է չափում շղթայի և դրա առանձին տեղամասերի պարամետրերը ըստ տրված տեխնիկական առաջադրանքի,<br>գ. պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:   |
| <b>Ուսումնառության արդյունք 2</b> | Սահմանում է փոփոխական հոսանքի վերաբերյալ հիմնական հասկացությունները  |
| <b>Կատարման չափանիշներ</b>        | ա. ճիշտ է սահմանում փոփոխական հոսանքը բնորոշող մեծությունները,<br>բ. ճիշտ է հետազոտում սինուսիդային լարման պարզագույն շղթաները,<br>գ. ճիշտ է չափում փոփոխական հոսանքի շղթայի պարամետրերը,<br>դ. պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:   |
| <b>Ուսումնառության արդյունք 3</b> | Գիտի տրամսֆորմատորի կառուցվածքը, հասկանում է տրամսֆորմատորի և մագնիսական կապով շղթաների աշխատանքի սկզբունքը  |
| <b>Կատարման չափանիշներ</b>        | ա. ճիշտ է հասկանում տրամսֆորմատորի նշանակությունը, պատկերացում ունի տրամսֆորմատորի կառուցվածքի և աշխատանքի սկզբունքի մասին,<br>բ. ճիշտ է տարրերակում տրամսֆորմատորի տեսակները և կատարում տրամսֆորմատորի պարամետրերի չափումներ՝ ըստ տրված տեխնիկական առաջադրանքի,<br>գ. ճիշտ է հաշվարկում մագնիսական կապով էլետրական շղթայի հոսանքները և լարումները:<br>դ. պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները: |
| <b>Ուսումնառության արդյունք 4</b> | Դասկանում է էլեկտրական շղթայում ընթացող անցումային և ռեզոնանսային երևոյթները   |
| <b>Կատարման չափանիշներ</b>        | ա. ճիշտ է գնահատում էլեկտրական շղթայի տարրերի հոսանքների և լարումների փոփոխությունները անցումային երևոյթների ընթացքում,<br>բ. ճիշտ է հաշվարկում մեկ ռեակտիվ տարրով շղթայում անցումային երևոյթը,<br>գ. ճիշտ է տարրերակում հաջորդական և գուգահեռ կոնտուրմերում ռեզոնանսային երևոյթները,<br>դ. ճիշտ է գնահատում տարրերի առավելագույն լարումները և հոսանքները:   |
| <b>Ուսումնառության արդյունք 5</b> | Տարրերակում է հաստատուն և փոփոխական հոսանքի շարժիչները, ընդհանուր պատկերացում ունի դրանց աշխատանքի սկզբունքի մասին   |
| <b>Կատարման չափանիշներ</b>        | ա. ճիշտ է ներկայացնում հաստատուն հոսանքի շարժիչի կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը,<br>բ. ճիշտ է ներկայացնում փոփոխական հոսանքի շարժիչի կառուցվածքը աշխատանքի սկզբունքը,<br>գ. ճիշտ է կատարում շարժիչների ընթացիկ սպասարկումը,<br>դ. պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:   |

### ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՍՈՒՄԸ «ՌԱԴԻՈԷԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԱՐՐԵՐ»

|  |  |
|--|--|
| <b>Մողուլի դասիչը</b>                          | ՌԷՍ-4-09-003   |
| <b>Մողուլի նպատակը</b>                         | Մողուլը մշակվել է ուսանողին ռադիոէկտրոնային սարքավորումներում օգտագործվող տարրերի, բաղադրամասերի, հնչային նաև միկրոէկտրոնային նյութերի պարամետրերի, առանձնահատկությունների նաև աշխատական գիտելիքներ տալու նպատակով։ Ավարտելով այս մողուլն ուսանողը կճանաչի հաղորդիչ, կիսահաղորդիչ, մեկուսիչ, մագնիսական, կերամիկական և ռադիոէլեմենտար սարքերում օգտագործվող այլ նյութերը։  |
| <b>Մողուլի տևողությունը</b>                    | 108 ժամ  |
| <b>Մուտքային պահանջները</b>                    | Այս մողուլը յուրացնելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՌԷՍ-4-09-002 «ԷԼԵԿՏՐԱՍԵԽՆԻԿԱՅԻ ՀԻՍՈՒՔՆԵՐ» մողուլը։  |
| <b>Մողուլի գնահատման կարգը</b>                 | Մողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի պահովումն է։  |
| <b>Ուսումնառության արդյունք 1</b>              | Տարրերակում է հաղորդիչ, կիսահաղորդիչ, մեկուսիչ, մագնիսական, կերամիկական նյութերը, դրանց պարամետրերը, առանձնահատկությունները  |
| <b>Կատարման չափանիշներ</b>                     | ա. ճիշտ է դասակարգում հաղորդիչ նյութերը, գիտի դրանց հիմնական հատկությունները և կիրառությունները,<br>բ. ճիշտ է դասակարգում կիսահաղորդիչ նյութերը, գիտի դրանց հիմնական հատկությունները և կիրառությունները,<br>գ. ճիշտ է դասակարգում մեկուսիչ նյութերը և գիտի դրանց հիմնական հատկությունները,<br>դ. ճիշտ է դասակարգում մագնիսական նյութերը և գիտի դրանց հիմնական հատկությունները։   |
| <b>Ուսումնառության արդյունք 2</b>              | Ներկայացնում է ռադիոէկտրոնային տեխնիկայի տարրերը, դրանց նշանակությունը և մակնիշավորումը  |
| <b>Կատարման չափանիշներ</b>                     | ա. ճիշտ է տարրերակում ռեզիստորների տեսակները, անվանական պարամետրերը, մակնիշավորումը և գումային կողավորումը,<br>բ. ճիշտ է տարրերակում կոնդենսատորների տեսակները, անվանական պարամետրերը, մակնիշավորումը և գումային կողավորումը,<br>գ. ներկայացնում է տրանսֆորմատորների և դրոսելների դերն ու նշանակությունը ռադիոէկտրոնային սարքավորումների բաղադրիչ մասերում,<br>դ. ճիշտ է չափում ռեզիստորների, կոնդենսատորների, տրանսֆորմատորների և դրոսելների պարամետրերը,<br>ե. տարրերակում է մալուխների տեսակները, մակնիշավորումը և կիրառությունները,<br>գ. պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները։ |
| <b>Ուսումնառության արդյունք 3</b>              | Տարրերակում է էլեկտրական և մեխանիկական փոխանցատիչների տեսակները, ներկայացնում աշխատանքի սկզբունքը և կիրառությունը  |
| <b>Կատարման չափանիշներ</b>                     | ա. տարրերակում է ապահովիչների հիմնական տեսակները, գիտի աշխատանքի սկզբունքը, կիրառությունները և ճիշտ է ընտրում համապատասխան հոսանքի ապահովիչը,<br>բ. տարրերակում է ռելեների տեսակները, մակնիշավորումը և գիտի գործնական կիրառությունը,<br>գ. տարրերակում է էլեկտրական, մեխանիկական, էլեկտրամեխանիկական անջատիչների և փոխանցատիչների տեսակները և գիտի գործնական կիրառությունը,<br>դ. պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները։   |
| <b>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՍՈՒՄԸ «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐ»</b> |  |
| <b>Մողուլի դասիչը</b>                          | ՌԷՍ-4-09-004   |
| <b>Մողուլի նպատակը</b>                         | Մողուլը մշակվել է ուսանողին ռադիոէկտրոնային սարքավորումներում օգտագործվող էլեկտրոնային սարքերի պարամետրերի, առանձնահատկությունների նաև գիտելիքներ և հնտություններ տալու նպատակով։ Ավարտելով այս մողուլն ուսանողը կճանաչի էլեկտրոնային սարքերը, ձեռք կբերի դրանց հետ աշխատելու և կիրառելու հնտություններ։   |

|  |  |
|--|--|
| <b>Մոդուլի տևողությունը</b>  | 108 ժամ  |
| <b>Մուտքային պահանջները</b>  | Այս մոդուլը յուրացնելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՌԵՍ-4-09-003 «ՌԱԴԻՈԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԱՐՈՐԵՐ» մոդուլը:   |
| <b>Մոդուլի գնահատման կարգը</b>   | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:   |
| <b>ՈՒսումնառության արդյունք 1</b>  | Ներկայացնում է էլեկտրոնային ուղղիչ սարքերի՝ դիոդների տեսակները, աշխատանքի սկզբունքը և կիրառման բնագավառները  |
| <b>Կատարման չափանիշներ</b>   | ա. դասակարգում է կիսահաղորդչային ուղղիչ սարքերը, ներկայացնում է դրանց նշանակությունը և մակնիշավորումը,<br>բ. տարրերակում է կիսահաղորդչային դիոդները, տիրհստորները, դրանց տարատեսակները, կիրառման բնագավառները և բացատրում աշխատանքի սկզբունքները,<br>գ. հանում է կիսահաղորդչային ուղղիչ սարքերի բնութագրերը՝ ըստ տրված տեխնիկական առաջադրանքի,<br>դ. պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:            |
| <b>ՈՒսումնառության արդյունք 2</b>  | Ներկայացնում է էլեկտրոնային ուժեղացնող սարքերի՝ տրանզիստորների տեսակները, աշխատանքի սկզբունքը և կիրառման բնագավառները  |
| <b>Կատարման չափանիշներ</b>   | ա. դասակարգում է կիսահաղորդչային ուժեղացնող սարքերը, ներկայացնում է դրանց նշանակությունը և մակնիշավորումը,<br>բ. տարրերակում է կիսահաղորդչային տրանզիստորները, դրանց տարատեսակները, կիրառման բնագավառները և բացատրում աշխատանքի սկզբունքները,<br>գ. հանում է կիսահաղորդչային ուժեղացնող սարքի՝ տրանզիստորի բնութագրերը՝ ըստ տրված տեխնիկական առաջադրանքի,<br>դ. պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները: |
| <b>ՈՒսումնառության արդյունք 3</b>  | Ներկայացնում է օպտոէլեկտրոնային տարրերի աշխատանքի սկզբունքը և տեսակները  |
| <b>Կատարման չափանիշներ</b>   | ա. ներկայացնում է ֆոտոէլեկտրոնային տարրերի տեսակները, նշանակությունը, մակնիշավորումը և կիրառությունը,<br>բ. ներկայացնում է լուսային տարրերի տեսակները, նշանակությունը, մակնիշավորումը և կիրառությունը,<br>գ. ներկայացնում է թվային և այբովութեարվային արտացոլիչների տեսակները և կիրառությունը:   |
| <b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԶԱՓԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՍՏԱՆԴԱՏԱՑՈՒՄ ԵՎ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄ»</b> |  |
| <b>Մոդուլի դասիք</b>   | ՌԵՍ-4-09-005   |
| <b>Մոդուլի նպատակը</b>   | Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ չափագիտության, ստանդարտացման և սերտիֆիկացման վերաբերյալ:<br>Ուսուցման արդյունքում ուսանողը կտրապեսի չափագիտության հիմունքներին, չափման միջոցներին, մեթոդներին, ստանդարտացման և սերտիֆիկացման հիմունքներին, ձեռք կբերի անհրաժեշտ հմտություններ:  |
| <b>Մոդուլի տևողությունը</b>  | 90 ժամ   |
| <b>Մուտքային պահանջները</b>  | Նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:   |
| <b>Մոդուլի գնահատման կարգը</b>   | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:   |
| <b>ՈՒսումնառության արդյունք 1</b>  | Գիտի չափման միջոցները, չափումների սխալները, կատարում է չափման միջոցների ճիշտ ընտրություն՝ ըստ ճշտության դասի   |
| <b>Կատարման չափանիշներ</b>   | ա. գիտի հիմնական ֆիզիկական մեծությունների գրառման ձևերը, չափողականությունները,<br>բ. ճիշտ է դասակարգում չափման միջոցները,<br>գ. ճիշտ է դասակարգում չափումները, չափումների սխալները,<br>դ. ճիշտ է դասակարգում չափման միջոցների սխալները,  |

|   |   |
|---|---|
|   | <b>Ե. Աստ ճշտության դասի ճիշտ է ընտրում չափման միջոցները:</b>   |
| <b>ՈՒԽՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 2</b><br><b>Կատարման չափամիջներ</b>   | <p>Տարբերակում է չափիչ սարքերի հիմնական տեսակները, գիտի աշխատանքի սկզբունքները և կիրառությունները</p> <p>ա. ճիշտ է բացատրում էլեկտրամեխանիկական չափիչ սարքերի ընդհանուր հատկությունները և աշխատանքի սկզբունքը,</p> <p>բ. ճիշտ է բացատրում մագնիսաէլեկտրական, էլեկտրամագնիսական սարքերի կառուցվածքները և գործողության սկզբունքը,</p> <p>շ. ճիշտ է նկարագրում էլեկտրաստատիկ, էլեկտրադինամիկ սարքերի գործողության սկզբունքը, շահագործման առանձնահատկությունները,</p> <p>դ. ճիշտ է բացատրում էլեկտրաէներգիայի ինդուկցիոն հաշվիչ կառուցվածքը, գործողության սկզբունքը,</p> <p>ե. ճիշտ է տարբերակում հոսանքի ու լարման չափիչ տրանսֆորմատորները,</p> <p>զ. գիտի շունչերի և լրացրցիչ ռեզիստորների կիրառման նպատակները:</p> |
| <b>ՈՒԽՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 3</b><br><b>Կատարման չափամիջներ</b>   | <p>Տարրողանում է էլեկտրամեխանիկական և թվային սարքերով, չափիչ կամրջակներով չափել էլեկտրական մեծություններ</p> <p>ա. էլեկտրամեխանիկական սարքերով ճիշտ է չափում հոսանք, լարում, հզրություն,</p> <p>բ. կարող է միացնել էլեկտրամեխանիկական սարք չափիչ տրանսֆորմատորով,</p> <p>շ. ճիշտ է կատարում հաստատուն և փոփոխական հոսանքի չափիչ կամրջակներով չափումներ՝ ըստ տրված տեխնիկական առաջադրանքի,</p> <p>դ. ճիշտ է չափում հողանցնան և մեկուսացման դիմադրությունները,</p> <p>ե. ճիշտ է որոշում մալուխի վնասված տեղը,</p> <p>զ. գիտի օսղիլոգրաֆով և թվային չափիչ սարքերով չափել էլեկտրական պարամետրեր՝ ըստ ճշտության դասերի,</p> <p>է. պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:</p>                                   |
| <b>ՈՒԽՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 4</b><br><b>Կատարման չափամիջներ</b>   | <p>Գիտի ստանդարտացման և սերտիֆիկացման հիմնական հասկացությունները</p> <p>ա. ճիշտ է սահմանում ստանդարտացման հիմնական հասկացությունները,</p> <p>բ. ճիշտ է սահմանում սերտիֆիկացման հիմնական հասկացությունները,</p> <p>շ. գիտի ստանդարտացման, սերտիֆիկացման օբյեկտները ռադիոէլեկտրոնիկայի բնագավառում,</p> <p>դ. ճիշտ է նկարագրում օբյեկտի սերտիֆիկացման համակարգի ընթացակարգը, սպառողական հատկությունները, ներկայացվող պահանջները:</p>  |
| <b>ՍՊՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆԱԼՈԳԱՅԻՆ ԵՎ ԻՄՊՈՒԼՍԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ»</b> |   |
| <b>Մոդուլի դասիք</b>  | Մոդուլի դասիք՝ ՈԷՍ-4-09-006   |
| <b>Մոդուլի նպատակը</b>  | Ուսանողներին տալ գիտելիքներ ժամանակակից էլեկտրոնային տարրերի վրա կառուցված անալոգային սխեմաների և դրանց կիրառությունների վերաբերյալ: Մոդուլի յուրացումը հնարավորություն կտա ձեռք բերելու անալոգային էլեկտրոնային սխեմաների ուսումնասիրման համար գիտելիքներ և հմտություններ՝ օգտագործելով էլեկտրոնային սխեմաների մշակման և հետազոտման ժամանակակից գործնական պարզ մեթոդներ:   |
| <b>Մոդուլի տևողությունը</b>                                       | 90 ժամ  |
| <b>Մուտքային պահանջները</b>                                       | Այս մոդուլը յուրացնելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՈԷՍ-4-09-004 «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐ» մոդուլը:  |
| <b>Մոդուլի գնահատման կարգը</b>                                    | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափամիջների բավարար նակարդակի ապահովումն է:  |
| <b>ՈՒԽՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 1</b>                                 | Դասկանում է ուժեղարարների աշխատանքի սկզբունքը, ներկայացնում է ուժեղացման ռեժիմները և կիրառման բնագավառները  |
| <b>Կատարման չափամիջներ</b>  | <p>ա. տարբերակում է ուժեղարարների տեսակները, ուժեղացման ռեժիմները, բնութագրերը և պարամետրերը,</p> <p>բ. գիտի ուժեղարար կասկադների աշխատանքի սկզբունքը տարբեր տեսակի ուժեղարար տարրերի վրա,</p>  |

|   |   |
|---|---|
|   | գ. ճիշտ է կառուցում ուժեղարար կասկադ, կատարում է համապատասխան չափումներ սխեմայի բնութագրիչ կետերում, դ. պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:  |
| Ուսումնառության արդյունք 2                    | Գիտի հաստատում հոսանքի ուժեղարարների առանձնահատկությունները, աշխատանքի սկզբունքը և կիրառման բնագավառները  |
| Կատարման չափանիշներ                           | ա. ճիշտ է հասկանում զրոյի դրեյֆի առաջացման պատճառները և գիտի դրանց փոքրացման ուղիները,<br>բ. ճիշտ է ներկայացնում դիֆերենցիալ ուժեղարար կասկադը, բացատրում է աշխատանքի սկզբունքը և ներկայացնում առանձնահատկությունները,<br>գ. գիտի ինտեգրալ գործութային ուժեղարարի պարամետրերը և բնութագրերը, տարբերակում է ինտեգրալ գործութային ուժեղարարների տարատեսակները և մակրիջավորումը:   |
| Ուսումնառության արդյունք 3                    | Տարբերակում է մարեմատիկական գործողություններ իրականացնող էլեկտրոնային սխեմաները   |
| Կատարման չափանիշներ                           | ա. գիտի ինտեգրալ և դիֆերենցիալ շրանքները, դրանց կիրառությունները,<br>բ. տարբերակում է լարման կոմպարատորները, գիտի աշխատանքի սկզբունքը և կիրառությունները,<br>գ. ճիշտ է կառուցում մասշտաբային ուժեղարարն ինտեգրալ գործութային ուժեղարարի վրա և կարողանում է հաշվարկել տարրերի նշանակությունները,<br>դ. ճիշտ է ընտրում էլեկտրական ազնաշանի սահմանափակիչները՝ ելեկտրական առաջադրանքի պահանջներից:  |
| Ուսումնառության արդյունք 4                    | Տարբերակում է հարմոնիկ և ինպուլսային ազդանշանների գեներատորների առանձնահատկությունները, աշխատանքի սկզբունքը, կիրառման բնագավառները  |
| Կատարման չափանիշներ                           | ա. տարբերակում է հարմոնիկ ազդանշանի գեներատորների տեսակները և աշխատանքային ռեժիմները,<br>բ. գիտի ինպուլսային ազդանշանների տարատեսակները և դրանց ստացման հիմնական մեթոդները,<br>գ. գիտի պարզագույն էլեկտրոնային բանալու աշխատանքի սկզբունքը,<br>դ. տարբերում է տրանզիստորների և կիսահաղորդչային դիոդների վրա կառուցված ինպուլսային գործողության սխեմաները, գիտի դրանց նշանակություններ,<br>ե. տարբերակում է իպուլսային ազդանշանի գեներատորների տեսակները և աշխատանքային ռեժիմները: |
| <b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԹՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ»</b> |   |
| Մոդուլի դասիչը                                | ՌԵՍ-4-09-007  |
| Մոդուլի նպատակը                               | Ուսանողներին տալ գործնական գիտելիքներ ժամանակակից էլեկտրոնային տարրերի վրա կառուցված թվային սարքավորումների և դրանց կիրառությունների վերաբերյալ: Մոդուլի յուրացումը հնարավորություն կտա ձեռք բերելու թվային ազդանշանների, մշակված սարքավորումների ուսումնասիրման համար գիտելիքներ և հմտություններ՝ օգտագործելով էլեկտրոնային համակարգերի մշակման և հետազոտման ժամանակակից մեթոդներ:   |
| Մոդուլի տևողությունը                          | 90 ժամ  |
| Մուտքային պահանջները                          | Այս մոդուլը յուրացնելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՌԵՍ-4-09-006 «ԱՆԱԼՕԳԱՅԻՆ ԵՎ ԻՄՊՈՒԼՍԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ» մոդուլը:  |
| Մոդուլի գնահատման կարգը                       | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:  |
| Ուսումնառության արդյունք 1                    | Գիտի տրամարանական տարրերի աշխատանքի սկզբունքը, դրանց դերն ու նշանակությունը   |
| Կատարման չափանիշներ                           | ա. ճիշտ է գծում պարզագույն տրամարանական տարրերի սխեմաները, բացատրում աշխատանքը,<br>բ. թվարկում է օպտոէլեկտրոնային բանալու առանձնահատկությունները, գիտի մթնային հոսանքի առաջացման պատճառները և դրանց խուսափման ուղիները:   |
| Ուսումնառության արդյունք 2                    | Տարբերակում է տրամարանական տարրերով ինպուլսային ազդանշանների գեներատորների առանձնահատկությունները, աշխատանքի սկզբունքը, կիրառման բնագավառները   |

|   |   |
|---|---|
| <b>Կատարման չափանիշներ</b>                                      | ա. տարբերակում է գեներատորների տեսակները և աշխատանքային ռեժիմները,<br>բ. առաջադրանքի պահանջներից ելելով կարողանում է ճիշտ ընտրել տրամաբանական տարրը համապատասխան գեներատորը կառուցելու նպատակով,<br>գ. գիտի հմապուլսային ազդանշանի գեներատորների հաճախության կայունացման հիմնական ուղիները:   |
| <b>Ուսումնառության արդյունք 3</b>                               | Տիրապետում է տրամաբանական հանրահաշվի տարրերին, տարբերակում կոմքինացիոն տրամաբանական սխեմաները   |
| <b>Կատարման չափանիշներ</b>                                      | ա. ճիշտ է իրականացնում պարզագույն տրամաբանական գործողություններ երկուական համակարգում,<br>բ. ճիշտ է իրականացնում տրամաբանական սխեմաների և դրանց համակցությունների տրամաբանական ֆունկցիաների կազմումը,<br>գ. տարբերում է տրամաբանական տարրերով տրիգերների տիպերը և հասկանում է դրանց աշխատանքը,<br>դ. տարբերակում է թվային ինտեգրալ սխեմաների հիմնական տարրատեսակները,<br>ե. պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:  |
| <b>Ուսումնառության արդյունք 4</b>                               | Տիրապետում է վերջավոր ավտոմատների հիմնական տարրերին   |
| <b>Կատարման չափանիշներ</b>                                      | ա. գիտի տրիգերների, հաշվիչների, ռեգիստրների, շիֆրատորների, մուլտիպլեքսորների և դեմուլտիպլեքսորների մակնիշավորումը, բացատրում է դրանց աշխատանքի սկզբունքը,<br>բ. ստուգում է տրիգերների, հաշվիչների, ռեգիստրների, շիֆրատորների, դեշիֆրատորների, մուլտիպլեքսորների աշխատանքի ճշտությունն ու վերացնում առկա անսարքությունները,<br>գ. տարբերակում է հաստատում և օպերատիվ հիշասարքերը, ներկայացնում կիրառությունները,<br>դ. ճիշտ է ներկայացնում տրամաբանական ծրագրավորող սարքերի աշխատանքի սկզբունքը, կիրառությունները: |
| <b>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱԶԴԱՆՇԱԽՆԵՐԻ ԱՌԱՋԱՅԻՆ ԿԵՐՊԱՓՈԽԻՉՉՆԵՐ»</b> |   |
| <b>Մողուլի դասիչը</b>   | ՈՒՍՍ-4-09-008   |
| <b>Մողուլի նպատակը</b>  | Ուսանողին տալ գիտելիքներ տարբեր ֆիզիկական սկզբունքներով գործող ազդանշանների առաջնային կերպափոխչների, դրանցով ստացված ազդանշանների ձևափոխման սխեմաների մասին: Ավարտելով այս մողուլն ուսանողը ծերք կրերի գիտելիքներ ազդանշանների տվյալների, դրանցից ստացված էլեկտրական ազդանշանների ներպափոխման սխեմաների և գործնական կիրառությունների վերաբերյալ:  |
| <b>Մողուլի տևողությունը</b>                                     | 72 ժամ  |
| <b>Մուտքային պահանջները</b>                                     | Այս մողուլն ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՈՒՍՍ-4-09-007 «ԹՎԱՅԻՆ ԵԼԵԿՏՐՈՆԻԿԱ» մողուլը:   |
| <b>Մողուլի գնահատման կարգը</b>                                  | Մողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար նակարդակի պահովումն է:   |
| <b>Ուսումնառության արդյունք 1</b>                               | Գիտի ազդանշանների առաջնային կերպափոխչները և դրանց կիրառությունները  |
| <b>Կատարման չափանիշներ</b>                                      | ա. ճիշտ է դասակարգում ազդանշանների առաջնային կերպափոխչները՝ ըստ դրանցում ընթացող ֆիզիկական երևույթների,<br>բ. ճիշտ է պատկերացնում ազդանշանի առաջնային կերպափոխչի դերն օբյեկտի պարամետրերի հսկման համար,<br>գ. գիտի ազդանշանի առաջնային կերպափոխչների հիմնական կիրառությունները:   |
| <b>Ուսումնառության արդյունք 2</b>                               | Դասկանում է ազդանշանների առաջնային կերպափոխչներում ընթացող ֆիզիկական երևույթները  |
| <b>Կատարման չափանիշներ</b>                                      | ա. տարբերակում է մեխանիկական տեսակի ազդանշանների առաջնային կերպափոխչները, բացատրում է դրանց աշխատանքը, կարողանում է գործնականում ճիշտ կիրառել,<br>բ. տարբերակում է ցերմային տեսակի ազդանշանների առաջնային կերպափոխչները, բացատրում է դրանց աշխատանքը, կարողանում է գործնականում ճիշտ կիրառել,<br>գ. տարբերակում է պյեզոէլեկտրական տեսակի ազդանշանների առաջնային կերպափոխչները, բացատրում է դրանց  |

|  |   |
|--|---|
|  | <p>աշխատանքը, կարողանում է գործնականում ճիշտ կիրառել,<br/>     դ. տարբերակում է ռեզիստիվ, ունակային և հիդրոկսիլի տեսակների ազդանշանների առաջնային կերպափոխչները, բացատրում է դրանց աշխատանքը, կարողանում է գործնականում ճիշտ կիրառել,<br/>     ե. տարբերակում է մրրկահոսանքային, մագնիսաառաձգական տեսակի ազդանշանների առաջնային կերպափոխչները, բացատրում է դրանց աշխատանքը, կարողանում է գործնականում ճիշտ կիրառել,<br/>     զ. կարողանում է ճիշտ գնահատել աղմուկների ազդեցությունն ազդանշանների առաջնային կերպափոխչների աշխատանքի վրա:</p> |
| Ուսումնառության արդյունք 3   | Դասկանում է ազդանշանների առաջնային կերպափոխչների համակցական հիմնական սխեմաների աշխատանքի սկզբունքը և գիտի դրանց գործնական կիրառությունը   |
| Կատարման չափանիշներ  | <p>ա. ճիշտ է հասկանում ազդանշանի առաջնային կերպափոխչի համակցող սխեմայի նշանակությունը,<br/>     բ. ճիշտ է ներկայացնում համակցող սխեման՝ կախված առաջնային կերպափոխչի տեսակից,<br/>     զ. կախված առաջնային տվյալի կոնկրետ տեսակից ճիշտ է համալրում համակցող սխեման:</p>  |
| <b>ՍՈՂՈՒԻՆ ԱՍՎԱՍՈՒՄԸ «ՄԻԿՐՈՊՐՈՑԵՍՈՐՅԱՅԻՆ ԵՎ ՄԻԿՐՈԿՈՍՏՐՈՒԵՐԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ»</b> |   |
| Մոդուլի դասիք  | ՈՒՍՍ-4-09-009   |
| Մոդուլի նպատակը  | Ուսանողներին տալ գիտելիքներ միկրոպրոցեսորների, միաբրյուեղ միկրոկոնտրոլերների ճարտարապետության, ապարատուր, ծրագրային միջոցների հնարավորությունների վերաբերյալ: Ավարտելով այս մոդուլն ուսանողը ձեռք կրերի միկրոպրոցեսորային և միկրոկոնտրոլերային սարքավորումների վերանորոգման և սպասարկման կիրառական հմտություններ:   |
| Մոդուլի տևողությունը   | 108 ժամ   |
| Մուտքային պահանջները   | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՈՒՍՍ-4-09-007 «ԹՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ» մոդուլը:  |
| Մոդուլի գնահատման կարգը  | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:   |
| Ուսումնառության արդյունք 1   | Ներկայացնում է միկրոպրոցեսորների և միաբրյուեղ միկրոկոնտրոլերների դասակարգումը՝ ըստ ընտանիքների և հիշողության կազմակերպման   |
| Կատարման չափանիշներ  | <p>ա. տարբերակում է Intel, Atmel, Motorola և այլ ընկերությունների միկրոպրոցեսորները,<br/>     բ. տարբերակում է միկրոպրոցեսորների հիշողության կազմակերպման կառուցվածքները,<br/>     զ. գիտի միկրոպրոցեսորային, միկրոկոնտրոլերային սարքավորումների արտաքին տվյալների և ծրագրային հիշողության կազմակերպման, ընդարձակման եղանակները:</p>  |
| Ուսումնառության արդյունք 2   | Գիտի տիպային միկրոպրոցեսորային, միկրոկոնտրոլերային սարքավորումների ճարտարապետությունը   |
| Կատարման չափանիշներ  | <p>ա. ճիշտ գիտի միկրոպրոցեսորների, միկրոկոնտրոլերների հիմնական պարամետրերը և ցուցանիշները,<br/>     բ. ճիշտ է բացատրում միկրոպրոցեսորների, միկրոկոնտրոլերների ճարտարապետության մոդուլա-մայրուղային սկզբունքը,<br/>     զ. ճիշտ է բացատրում հասցեների, տվյալների, կառավարման մայրուղիների կազմակերպման առանձնահատկությունները,<br/>     դ. ճիշտ է տարբերակում միկրոպրոցեսորների, միկրոկոնտրոլերների հիմնական հանգույցները,<br/>     ե. ճիշտ է բացատրում միկրոկոնտրոլերների ապարատուր միջոցների նշանակությունները:</p>                        |
| Ուսումնառության արդյունք 3   | Կարողանում է գորել պարզագույն տիպային ծրագրեր   |
| Կատարման չափանիշներ  | ա. ճիշտ է կազմում միկրոպրոցեսորների, միկրակոնտրոլերների հանգույցների միջև տվյալների փոխանակման պարզ ծրագրերը,   |

|   |  |
|---|--|
|   | <p>բ. ճիշտ է կազմում միկրոպրոցեսորների, միկրոկոնտրոլերների և արտաքին սարքերի միջև ազդանշանների, տվյալների փոխանակման պարզ ծրագրերը,</p> <p>գ. տիրապետում է միկրոկոնտրոլերների ապարատուր միջոցների ծրագրավորման գործընթացներին:</p>   |
| ՈՒՍՈՒՄԱՉՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 4   | Գիտի միկրոպրոցեսորի, միկրոկոնտրոլերի ինտերֆեյսի կազմակերպման սկզբունքները  |
| Կատարման չափանիշներ   | <p>ա. ճիշտ է իրականացնում ապարատուր կցորդումը տեսատիպը միկրոկոնտրոլերի հետ,</p> <p>բ. ճիշտ է իրականացնում ծրագրային կցորդումը տեսատիպը միկրոկոնտրոլերի հետ,</p> <p>գ. ճիշտ է իրականացնում ապարատուր կցորդումը ստեղնաշարը միկրոկոնտրոլերի հետ,</p> <p>դ. ճիշտ է իրականացնում ծրագրային կցորդումը ստեղնաշարը միկրոկոնտրոլերի հետ,</p> <p>ե. պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:</p> |
| <b>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄԵԱԿՄԱՆ ՀՄՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ»</b>                                       |  |
| Մոդուլի դասիք   | ՈՒՍ-4-09-010   |
| Մոդուլի նպատակը   | Ուսանողին տալ անհրաժեշտ գիտելիքներ տեխնիկական փաստաթղթերի մշակման վերաբերյալ:  |
| Մոդուլի տևողությունը  | 72 ժամ   |
| Մուտքային պահանջները  | Նախնական հնտություններ և կարողություններ չեն պահանջվում:   |
| Մոդուլի գնահատման կարգը   | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի պահովումն է:  |
| ՈՒՍՈՒՄԱՉՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 1   | Կարողանում է օգտվել ստանդարտացման նորմատիվային փաստաթղթերից  |
| Կատարման չափանիշներ   | <p>ա. գիտի ՀՀ ազգային ստանդարտների դասակարգումը,</p> <p>բ. գիտի ռադիոէլեկտրոնային բաղադրամասերի տերմինաբանական ստանդարտները,</p> <p>գ. գիտի ռադիոէլեկտրոնային բաղադրամասերի պարամետրերի չափման մեթոդների ստանդարտները,</p> <p>դ. կարող է օգտվել անհրաժեշտ ստանդարտից:</p>  |
| ՈՒՍՈՒՄԱՉՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 2   | Կարողանում է կազմել, վերլուծել ռադիոէլեկտրոնային սարքավորումների տեխնիկական պայմանների բաժիններ՝ ըստ տրված առաջադրանքի   |
| Կատարման չափանիշներ   | <p>ա. գիտի տեխնիկական պայմանների կառուցվածքը,</p> <p>բ. գիտի տեխնիկական պայմանների հաստատման և գրանցման կարգը,</p> <p>բ. ճիշտ է կազմում, վերլուծում տեխնիկական պայմանների առանձին բաժինները՝ ըստ տրված առաջադրանքի:</p>  |
| ՈՒՍՈՒՄԱՉՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 3   | Կարողանում է կազմել ռադիոէլեկտրոնային սարքավորումների սկզբունքային էլեկտրական սխեմաներ   |
| Կատարման չափանիշներ   | <p>ա. գիտի կոնստրուկտորական փաստաթղթերում ռադիոէլեկտրոնային բաղադրամասերի գրելաձևերը,</p> <p>բ. ճիշտ է նկարագրում էլեկտրական սկզբունքային սխեմաների կազմնան կանոնները,</p> <p>գ. կարող է կազմել ռադիոէլեկտրոնային սարքավորման սկզբունքային էլեկտրական սխեման՝ ըստ տրված տեխնիկական առաջադրանքի:</p>  |
| <b>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԶԱՓՈՒՄՆԵՐԻ, ՎԵՐԱՆՈՐՈՊԱՍՆ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՄՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ»</b> |  |
| Մոդուլի դասիք   | ՈՒՍ-4-09-011   |
| Մոդուլի նպատակը   | Ուսանողին տալ գործնական գիտելիքներ ռադիոէլեկտրոնային տեխնիկայի սարքավորումների վերանորոգման գործընթացում համապատասխան չափումներ, մոնտաժում, ապամոնտաժում և հարակից աշխատանքներ կատարելու համար: Ավարտելով այս մոդուլն ուսանողը ձեռք կրերի անհրաժեշտ էլեկտրական չափումներ, թեսքավորում, մոնտաժում և ապամոնտաժում կատարելու հնտություններ:   |
| Մոդուլի տևողությունը  | 108 ժամ  |
| Մուտքային պահանջները  | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՈՒՍ-4-09-003 «ՌԱԴԻՈԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԱՐՐԵՐ» և ՈՒՍ-4-09-004 «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐ» մոդուլները:  |

|   |   |
|---|---|
| <b>Մոդուլի գնահատման կարգը</b>                            | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:  |
| <b>ՈՒսումնառության արդյունք 1<br/>Կատարման չափանիշներ</b> | Տարբերակում է զողման գործընթացում անհրաժեշտ նյութերը, գործիքները, գիտի աշխատել տպահարթակի հետ ա. գիտի զողմանյութերի և հալանյութերի տեսակները,<br>բ. ճիշտ է կատարում զողիչի ընտրությունը, աշխատանքի նախապատրաստումը,<br>գ. ճիշտ է ընտրում զողման պարագաները, կարողանում է իրականացնել զողում՝ պահպանելով տեխնոլոգիական պահանջները,<br>դ. գիտի տպահարթակի պատրաստման և խածատման տեխնոլոգիան,<br>ե. ճիշտ է օգտագործում փականագործական գործիքները,<br>զ. պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:   |
| <b>ՈՒսումնառության արդյունք 2<br/>Կատարման չափանիշներ</b> | Գիտի ռադիոէլեկտրոնային սարքավորման և առանձին հանգույցների քանդման, հավաքման տեխնոլոգիաները, իրականացնել ընթացիկ սպասարկում<br>ա. ճիշտ է պահպանում քանդման, տարանջատման հերթականությունը,<br>բ. ճիշտ է պահպանում հավաքման գործընթացի հերթականությունը և նորմերը,<br>գ. ճիշտ է պապանոնտաժում անսարք ռադիոէլեկտրոնային տարրը և այն փոխարինում նորով,<br>դ. կարողանում է կատարել պտտվող, շփվող հանգույցների մաքրում և քսութապատում,<br>ե. ճիշտ է կարգավիրում ռադիոէլեկտրոնային հանգույցներում հայտնաբերված շեղումները,<br>զ. պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:   |
| <b>ՈՒսումնառության արդյունք 3<br/>Կատարման չափանիշներ</b> | Կարողանում է հավաքել և կառուցավորել ռադիոէլեկտրոնային սխեմաներ, սարքավորումներ<br>ա. ճիշտ է ընտրում ռադիոէլեկտրոնային տարրերը,<br>բ. կարողանում է ծևավորել ռադիոէլեկտրոնային տարրերի ելուստները և ճիշտ տեղադրել տպահարթակի վրա,<br>գ. ճիշտ է ընտրում մոնտաժման հաղորդալարերը,<br>դ. ճիշտ է կատարում հղող տարրերի մոնտաժը,<br>ե. ճիշտ է պահպանում էկրանավորման և աղմկակայունության պահպանը,<br>զ. պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:   |
| <b>ՈՒսումնառության արդյունք 4<br/>Կատարման չափանիշներ</b> | Կարողանում է օգտվել չափիչ-հսկիչ, թեսրավորման սարքերից և գործիքներից<br>ա. տարրերակում է չափիչ, ստուգիչ, հսկիչ, թեսրավորման սարքավորումները,<br>բ. ճիշտ է կիրառում չափման համար ընտրված գործիքները,<br>գ. ճիշտ է ընթեռնում սանդղակների, չափիչ, արտացոլիչ սարքերի ցուցմունքները՝ չափման տարրեր տիրույթներում,<br>դ. ճիշտ է ստուգում ռադիոէլեկտրոնային հանգույցների բնութագրիչ աղդանշանները,<br>ե. ճիշտ է կատարում ռադիոէլեկտրոնային տարրերի, հանգույցների ստուգումները և չափումները,<br>զ. չափումների արդյունքները մշակելիս ճիշտ է հաշվի առնում չափման սխալները,<br>է. պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները: |

### **ՄՈԴՈՒԼԻ ԱՍՎԱՆՈՒՄԸ «ԷԼԵԿՏՐԱՍՍԱՎԱՆ ԱՊՅԱՆԱԿԱՆ»**

|                             |   |
|-----------------------------|---|
| <b>Մոդուլի դասիչը</b>       | ՌԵՍ-4-09-012  |
| <b>Մոդուլի նպատակը</b>      | Ուսանողին տալ գիտելիքներ էլեկտրասնան աղբյուրների հիմնական տեսակների, դրանց կառուցման եղանակների, աշխատանքային ռեժիմների և կիրառությունների վերաբերյալ: Մոդուլի ուսումնասիրման հիմնական խնդիրն է ուսանողների մոտ ծևավորել հմտություններ՝ կապված տարրեր տեսակի կերպափոխչային սարքավորումների և դրանց վրա կառուցված էլեկտրասնան աղբյուրների ուսումնասիրման, վերանորոգման և սպասարկման հարցերի հետ: |
| <b>Մոդուլի տևողությունը</b> | 108 ժամ   |

|  |  |
|--|--|
| <b>Մուտքային պահանջները</b>  | Այս մոդուլն ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՈՒՍ-4-09-002 «ԷԼԵԿՏՐԱՍՏԵԽՆԻԿԱՅԻ ԴԻՄՈՒԹԵՐ» և ՈՒՍ-4-09-006 «ԱՍԱԼՈԳԱՅԻՆ ԵՎ ԻՄՊՈՒԼՍԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ» մոդուլները:   |
| <b>Մոդուլի գնահատման կարգը</b>   | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:   |
| <b>Ուսումնառության արդյունք 1</b>  | Տարրերակում է էլեկտրասնաման աղբյուրների կառուցվածքները, սահմանում ուղղիչների, կոնվերտորների, հաստատուն լարման կարգավորիչների միջոցով կատարվող կերպահույսումները  |
| <b>Կատարման չափանիշներ</b>   | ա. կարողանում է ճիշտ պարզել տվյալ կառուցվածքի էլեկտրասնաման աղբյուրում կատարվող էլեկտրական էներգիայի կերպահույսումների քանակը,<br>բ. տարրերակում է աղբյուրի առանձին համգույցները, ճիշտ է մեկնաբանում դրանց դերը,<br>գ. տարրերակում է ուղղիչների, կոնվերտորների և հաստատուն լարման կարգավորիչների միջոցով էներգիայի կերպահույսումների եղանակները:   |
| <b>Ուսումնառության արդյունք 2</b>  | Տարրերակում է ուղղիչների հիմնական սխեմաները, հասկանում դրանց աշխատանքի սկզբունքը և կիրառությունները  |
| <b>Կատարման չափանիշներ</b>   | ա. տարրերակում և ճիշտ է գծում է ուղղիչների հիմնական սխեմաները, բացատրում դրանց աշխատանքը,<br>բ. կատարում է չափումներ ուղղիչի լարորատոր ստենդի կամ փորձանմուշի վրա՝ ըստ տեխնիկական առաջադրանքի,<br>դ. պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:  |
| <b>Ուսումնառության արդյունք 3</b>  | Տարրերակում է հաստատուն լարման կարգավորիչների, կոնվերտորների հիմնական սխեմաները, հասկանում դրանց տարրերի դերը և աշխատանքային ռեժիմները   |
| <b>Կատարման չափանիշներ</b>   | ա. գիտի հաստատուն լարման պարամետրական կայունարարի սխեման և աշխատանքի սկզբունքը,<br>բ. գիտի հաստատուն լարման կոմպենսացմանբ կայունարարի աշխատանքի սկզբունքը, ճիշտ է նկարագրում կոնկրետ սխեմայի աշխատանքը,<br>գ. տարրերակում է հաստատուն լարման իմպուլսային կարգավորիչների և կոնվերտորների հիմնական սխեմաները, գիտի դրանց բնութագրիչ հատկությունները,<br>դ. հասկանում է իմպուլսային կարգավորիչներում և կոնվերտորներում տարրերի դերը և աշխատանքային ռեժիմները,<br>ե. հասկանում է իմպուլսային կարգավորիչների միջոցով հաստատուն հոսանքի շարժիչի կառավարման սկզբունքը,<br>գ. կատարում է կարգավորիչի, կոնվերտորի պարամետրերի չափումներ՝ ըստ տեխնիկական առաջադրանքի,<br>դ. պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները: |
| <b>Ուսումնառության արդյունք 4</b>  | Դասկանում է էլեկտրասնաման աղբյուրում հարթեցնող զտիչ(ներ)ի դերը, տարրերակում է սխեմաները, հաշվարկում ուղղիչի պարզագույն զտիչի սխեմա   |
| <b>Կատարման չափանիշներ</b>   | ա. տարրերակում է զտիչների տարատեսակները և սխեմաները,<br>բ. հասկանում է էլեկտրասնաման աղբյուրում զտիչ հանգույց(ներ)ի նշանակությունը,<br>գ. ճիշտ է հաշվարկում պարզագույն ունակյին զտիչի կոնդենսատորի ունակությունը,<br>դ. ճիշտ է կատարում զտիչի պարամետրերի չափումները՝ ըստ տեխնիկական առաջադրանքի,<br>ե. պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:   |
| <b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՍՈՒԾՈՒԹՅՈՒՆ «ՌԱԴԻՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՇՐՋԱՑՄԱՆ ԵՎ ԱԶԴԱԿԱՆԱՆԵՐ»</b> |  |
| <b>Մոդուլի դասիչը</b>  | ՈՒՍ-4-09-013   |
| <b>Մոդուլի նպատակը</b>   | Ուսանողին տալ գիտելիքներ էլեկտրամագնիսական ալիքների օգնությամբ տեղեկատվության հաղորդման, գծային, ոչ գծային, պարամետրական էլեկտրական շղթաների, մոդուլարարների, դետեկտորների մասին: Ավարտելով մոդուլն ուսանողը ծեռք կրերի ռադիոտեխնիկական շղթաների կազմման և վերլուծության հմտություններ:  |
| <b>Մոդուլի տևողությունը</b>  | 108 ժամ  |
| <b>Մուտքային պահանջները</b>  | Այս մոդուլը յուրացնելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՈՒՍ-4-09-002  |

|  |   |
|--|---|
|  | «ԷԼԵԿՏՐԱՍԵԽՆԻԿԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» և ՈՒՍ-4-09-003 «ՌԱԴԻՈԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԱՐՐԵՐ» մոդուլները:   |
| Մոդուլի գնահատման կարգը  | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:  |
| ՈՒսումնառության արդյունք 1   | Ներկայացնում է էլեկտրամագնիսական ալիքների օգնությամբ տեղեկատվության հաղորդման սկզբունքները  |
| Կատարման չափանիշներ  | ա. գիտի էլեկտրամագնիսական ալիքների օգնությամբ տեղեկատվության հաղորդման սկզբունքները,<br>բ. գծում և ճիշտ է վերլուծում կապի կապուղու կառուցվածքային սխեման,<br>գ. գիտի և ճիշտ է դասակարգում ազդանշանների տեսակները:   |
| ՈՒսումնառության արդյունք 2   | Ներկայացնում է կենտրոնացված պարամետրերով ռադիոտեխնիկական գծային էլեկտրական շղթաները   |
| Կատարման չափանիշներ  | ա. գիտի կենտրոնացված պարամետրերով ռադիոտեխնիկական գծային էլեկտրական շղթաները և դրանց ազդեցությունը ռադիոազդանշանների վրա,<br>բ. ճիշտ է տարրերակում հաջորդական, զուգահեռ, կապակցված տատանողական կոնտուրները և դրանցում ընթացող երևույթները,<br>գ. ճիշտ է կատարում կոնտուրի տարրերի հաշվարկը,<br>դ. գիտի և ճիշտ է գծում ռադիոտեխնիկական գծային էլեկտրական շղթաների անպիտուդա - հաճախային և փուլա - հաճախային բնութագրերը: |
| ՈՒսումնառության արդյունք 3   | Ներկայացնում է բաշխված պարամետրերով ռադիոտեխնիկական գծային էլեկտրական շղթաները, երկար գծերը   |
